ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03
ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-21/21 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

ք.Երևան **«16» «դեկտեմբերի» 2021թ.,**
ժամը՝ 10:00

Հանձնաժողովի նախագահ՝
Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի որակի վարչության պետ Արա Մկրտչյան

Հանձնաժողովի անդամներ՝
Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի օրենսդրության կատարելագործման և վերլուծությունների վարչության մասնագետ Վեներա Զուռնաչյան
Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի փորձագետ Ռոբերտ Դայան

Հանձնաժողովի քարտուղար՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ՝ Սոնա Շիրինյան

---

1. **«ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-21/21» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի վերաբերյալ**

1.1 «ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-21/21» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանված է եղել 2021թ. դեկտեմբերի 14-ը ժամը 10:00-ն: Հակադարձ աճուրդը տեղի է ունեցել 2021թ. դեկտեմբերի 15-ին ժամը 10:00-10:30-ն՝ **eauction.armeps.am** համակարգի միջոցով:

1.2 Հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

N	Մասնակցի անվանումը	Հեռախոս	ՀՎՀՀ
1	Մեգնա ՍՊԸ	+374 99 10 91 03	00083019

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

2. Տեղեկատվություն հարցումների և պատասխանների վերաբերյալ

2.1 Հարցումներ չեն կատարվել և պարզաբանումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտի և հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ.

3.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտը կազմված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

3.2 Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են անճշտություններ՝

3.2.1 Մեգնա ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման մեջ Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմինի անվամբ բացված հաշվի համարը սխալ է նշված, ինչպես նաև դիմում հայտարարության մեջ Մեգնա ՍՊԸ-ի բանկային հաշվեհամարը թերի է լրացված և ռուսերեն անվանումը անհրաժեշտ է լրացնել ռուսերեն տառերով:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

4. **«ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-21/21» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի մասին**

Գնահատող հանձնաժողովը որոշեց

4.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետը, հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և ծանուցել Մեգնա ՍՊԸ-ին, որպեսզի սահմանված ժամկետում շտկի նշված անհամապատասխանությունները:

4.2 Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա 2021 թվականի դեկտեմբերի 20-ին, ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի ստորագրությունը

Հանձնաժողովի Նախագահ՝	Արա Մկրտչյան	
Անդամներ՝	Վեներա Զուռնաչյան	
	Ռոբերտ Դայան	
Քարտուղար՝	Սոնա Շիրինյան	